

**ԲԻԶՆԵՍ-ՄԻԶՄՎԱՅՐՆ ՈՒ ՀԱՐԿԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԵՄՏԱՍԿԱՆ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Տ.Վ.

ՀՀ գործարարությանը խոչընդոտող հիմնական գործոններից է հարկերի վճարման ընթացակարգը, որն ինստիտուցիոնալ կամ «երկրորդ» սերնդի բարեփոխումների հրամայականով շարունակաբար բարելավվում է. կրճատվել է հարկային հաշվետվությունների թիվը էլեկտրոնային հաշիվ ապրանքագրեր դուրս գրելու և էլեկտրոնային եղանակով դրանք հարկային տարածքային մարմին ուղարկելու միջոցով (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

2007-2013թթ. հարկերի վճարումը ՀՀ-ում¹

Հարկերի վճարման ընթացակարգ	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Վարկանիշ	-	-	-	-	-	159	153
Հարկային հաշվետվություններ (քանակ)	50	50	50	50	50	50	34
Հարկային հաշվետվությունները կազմելու վրա կատարված ժամանակի ծախս (ժամ)	580	580	581	581	581	581	500
Ընդհանուր հարկային դրույքաչափի (համախառն եկամտից համապատասխան նվազեցումները կատարելուց հետո, %)	38.7	38.7	40.7	40.7	40.7	40.7	40.9

Այսպես, 2013թ. հարկերի վճարման դյուրությանը Հայաստանի վարկանիշը 189 երկրների համեմատ բարձրացել է 6 սանդղակով: Հարկերի վճարման ընթացակարգերը ներառում են այն բոլոր հարկերը, որոնք պետք է վճարի առևտրային ընկերությունը հարկային տարվա ընթացքում, ներառյալ՝ հարկման վարչարարական բեռը: Վերջինս հարկային հաշվետվությունների թիվն է, դրանց լրացման համար անհրաժեշտ ժամանակը և համախառն եկամտից հարկերի վճարման դրույքաչափը: Այնուամենայնիվ, ՀՀ բիզնեսի զարգացմանը խոչընդոտող գլխավոր ռիսկային գործոնը համարվում է հար-

¹ Տե՛ս <http://doingbusiness.org/data/exploreconomies/armenia#trading-across-borders>

կերի վճարումը: Ավելին, աղյուսակ 2-ի տվյալներով, 2013թ. ընկերությունները յուրաքանչյուր տարի ծախսում են 300 ժամ 30 հարկային հաշվետվություններ լրացնելու և օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնելու համար, Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպությունների (ՏՀԶԿ) երկրներում՝ 186 ժամ, Արևմտյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում՝ 302 ժամ: Բացի դրանից, ՀՀ գործարարները հարկային տարածքային տեսչություններ են ներկայացնում տարեկան շուրջ 34 հարկային հաշվետվություններ, ինչը ՏՀԶԿ երկրներում կազմում է 13, իսկ Արևմտյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում՝ 37:

Աղյուսակ 2

2013թ. հարկերի վճարման ընթացակարգերի համեմատական գնահատումը ՀՀ-ում, Արևմտյան Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի և ՏՀԶԿ երկրներում²

Հարկերի վճարումը կարգավորող ընթացակարգերը	Հայաստան	Արևմտյան Եվրոպա և Կենտրոնական Ասիա	ՏՀԶԿ (OECD)
Հարկային հաշվետվություններ (քանակ)	30	37	13
Հարկային հաշվետվությունները կազմելու վրա կատարված ժամանակի ծախս (ժամ)	300	302	186
Շահութահարկ (համախառն եկամտից համապատասխան նվազեցումները կատարելուց հետո, %)	16.8	9.3	15.4
Եկամտահարկ (ԱՎՈԲՄ-ից համապատասխան նվազեցումները կատարելուց հետո, %)	23	21.7	24.0
Այլ հարկեր (համախառն եկամտից համապատասխան նվազեցումները կատարելուց հետո, %)	1.1	9.5	3.2
Ընդհանուր հարկային դրույքաչափ (համախառն	40.9	40.4	42.7

² Այս աղյուսակը կազմվել է ըստ հետևյալ կայքերի պաշտոնական վիճակագրական տվյալների՝ <http://doingbusiness.org/data/exploreconomies/armenia> <http://www.taxservice.am/index.php>

եկամտից համապատասխան նվազեցումները կատարելուց հետո, %)			
--	--	--	--

Ընդ որում, 2013թ. հարկային հաշվետվությունների թվի կրճատումը պայմանավորվում է հարկային համակարգում իրականացվող բարեփոխումներով, որոնց շնորհիվ 2011 թվականից բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար, որոնք գործում են ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) դաշտում, համապարտադիր բնույթ է կրում էլեկտրոնային հաշիվ ապրանքագրերի դուրս գրման եղանակը: Վերջինս նշանակում է, որ ստուգումները հիմնված են ռիսկի վերլուծությունների վրա, որոնց համաձայն, հարկային մարմիններից ակնկալվում է ապահովել ավելի մեծ հարկային հավաքագրումներ: Բացի այդ, 2013 թ. սկսած՝ սոցիալական ապահովագրության վճարների, որոնք գանձվում են հարկային գործակալներից և աշխատողների աշխատանքի վճարմանն ուղղված միջոցներից (ԱՎՈՒՄ), շահութահարկի հաշվետվությունները փոխարինվել են անձնային եկամտային հարկով, ինչը հարկային գործակալների կողմից համապարտադիր ներկայացվում է էլեկտրոնային եղանակով: 2012 թ. հարկային բարեփոխումների շնորհիվ «հարկերի վճարման» ընթացակարգով ՀՀ վարկանիշը 189 երկրների շարքում նույն տարում 153-րդ տեղն էր զբաղեցնում՝ նախորդ տարվա նկատմամբ ավելանալով 6 սանդղակով:

Չնայած Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) կողմից կառավարությանն ու գործարարներին ներկայացված հարկային նոր փաթեթին, որը առավել շատ նպատակամիտված է բացահայտել և ստվերից «դուրս հանել» ստվերային տնտեսական գործունեության ծավալները, այնուամենայնիվ, դեռևս հարկային վարչարարության ցածր մակարդակը նպաստում է ստվերային եկամուտների առաջացմանը:

Փորձենք գնահատել ստվերային տնտեսության մասշտաբները ֆինանսական ճգնաժամի և հետճգնաժամի տարիների ընթացքում՝ հիմք ընդունելով Համաշխարհային բանկի (ՀԲ) «Գործարարությամբ զբաղվելու» և ՀՀ Կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի, ՀՀ ազգային վիճակագրության ծառայության ներկայացրած՝ հարկային բեռը հիմնավորող տարեկան զեկույցի տվյալները՝ միննույն ժամանակ փորձելով համադրումների եղանակով բացահայտել ՀՀ ստվերային եկամուտների իրական մեծությունները՝ տոկոսային արտահայտությամբ:

Աղյուսակ 3-ի տվյալները ցույց են տալիս, որ ՀԲ-ի և ՊԵԿ-ի տված հարկային բեռի տարբեր գնահատականների բացասական տարբերությունը կազմում է հենց ստվերային տնտեսությունը, որը ՀՀ-ում 2006թ. եղել է 24.2 %, 2007թ. 2006թ. նկատմամբ նվազել է 1.6%-ային նիշով, 2008-2010թթ. դրանց մեծությունը գրեթե չի փոխվել և կազմել է 23.9%: Սկսած 2011 թ. մինչ օրս ՀՀ-ում իրականացվող շարունակական բարեփոխումների շնորհիվ («երրորդ» սերնդի բարեփոխումներ կամ «էլեկտրոնային կառավարության և հասարակության փոխազդեցություն» ձևավորման բարեփոխումներ) ստվերային

տնտեսության չափերը գնալով նվազում են 0.14%-ային նիշով: Գծապատկեր 1-ի տվյալներից կարող ենք եզրակացնել, որ պաշտոնական ՀՆԱ-ն 2006-2011թթ. աճել է միջինը՝ 3305.7 մլդ դրամ, իսկ չհաշվառված ՀՆԱ-ի մեծությունը կազմել է միջինը՝ 760.7 մլրդ. դրամ:


Աղյուսակ 3

ՀՀ ստվերային տնտեսության հաշվարկումը 2004-2012թթ.³

Տարի	ՀԲ-ի հարկային բեռի գնահատական (հարկեր/ՀՆԱ), ³	ՀՀ ՊԵԳ-ի հարկային բեռի գնահատական (հարկեր/ՀՆԱ), %	Ստվերային տնտեսության մասշտաբի գնահատում, %
(1)	(2)	(3)	(4)=(2)-(3)
2004	-	14.0	-
2005	-	14.3	-
2006	38.7	14.5	24.2
2007	38.7	16.1	22.6
2008	40.7	17.4	23.3
2009	40.7	16.8	23.9
2010	40.7	16.9	23.8
2011	40.7	19.9	20.8
2012	40.9	20.7	20.2

Գծապատկեր 1

Պաշտոնական և չհաշվառված ՀՆԱ-ի դինամիկան 2006-2011թթ.⁴



³ <http://doingbusiness.org/data/exploreconomies/armenia>

⁴ Մեփական դիտարկում:

2008 թ. սկսած՝ ՀՀ-ում ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով ստվերային եկամուտները կրկին չեն նվազել: Ավելին, դրանք 2009թ. աճել են 0.7%-ային նիշով: Բացի այդ, ՀՀ ՊԵԿ-ը հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով մշակել է «Հարկային վարչարարության 2008-2012թթ. և 2012-2014թթ. ռազմավարությունները», որոնք արդեն ներդրվել են կարգավորելու ՀՀ բիզնես-միջավայրը: Այդ ամենի շնորհիվ հարկային ցածր վարչարարության աստիճանը բավական բարելավվել է, սահմանվել են 7 հիմնական նպատակներ և դրանց համապատասխան իրականացվելիք 29 քաղաքականություններ՝ նպաստելով հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացմանն ու հարկային մարմնի հիմնական բիզնես-գործընթացների վերակազմակերպմանը⁵:

Այսպիսով, 2008-2012թթ. հարկային բարեփոխումների շարունակական իրականացման շնորհիվ, կարող ենք հիմնավորել այն մտտեցումը, որ դրանք նպաստում են ստվերային տնտեսության կրճատմանը, խոշոր բիզնեսին դեպի օրինական դաշտ բերելու քաղաքականության ներդրմանը և ՓՄՁ-ների նկատմամբ փափուկ վարչարարության կիրառմանը: Օրինակ՝ 2011թ. ստվերային տնտեսության մասշտաբները 2008թ. նկատմամբ կրճատվել են 3%-ային նիշով, և շարունակական և հետևողական հարկային բարեփոխումների միջոցով նույն միտումը կարող է շարունակվել նաև 2012 թվականին՝ կազմելով 0.6 %-ային նիշով անկում՝ 2011թ. նկատմամբ:

Հարկային համակարգի ճիշտ կառուցվածք ընտրելու տեսանկյունից կարևորվում է ստվերային տնտեսության վրա ուղղակի և անուղղակի հարկերի ազդեցության գնահատումը: Օրինակ, Ֆ.Շնայդերն այդ խնդիրը քննել է Ավստրիայի և սկանդինավյան երկրների վերլուծության միջոցով: Ավստրիայի դեպքում հեղինակը որպես ստվերային տնտեսության շարժիչ ուժ է դիտարկում 4 փոփոխական՝ ուղղակի հարկեր, անուղղակի հարկեր, հարկային համակարգի բարդություն և պետական կարգավորումների ինտենսիվություն: Այս առումով, ամենանշանակալի ազդեցությունն ունեն ուղղակի հարկերը, որին հետևում է հարկային համակարգի բարդությունը: Բոլոր երեք երկրներում հարկային փոփոխականներն (ուղղակի հարկերի միջին դրույքաչափը, ընդհանուր հարկերի միջին դրույքաչափը, սահմանային հարկային դրույքաչափերը) ստվերային տնտեսության վրա ունեն սպասվող դրական ազդեցություն և վիճակագրորեն նշանակալի են⁶:

Այսպիսով՝ հարկային բարեփոխումների ընթացքում հիմնական շեշտը պետք է դրվի հարկային բեռի թեթևացման և ստվերային տնտեսության

⁵ **Schneider F.** *The Analistic report in 49 Countries Under Gray Economic Structure*, UB. N113, 2004, pp.112-118.

⁶ Նույն տեղում:

⁷ ՀՀ Կառավարության 2012թ. փետրվարի 23-ի N195 որոշում (Հարկային վարչարարության 2008-2012թթ. և 2012-2014թթ. ռազմավարությունները, էջ 5-15):

ծավալների կրճատման վրա: Հարկային թույլ վարչարարության պայմաններում հարկային բեռի թեթևացումը պետք է ուղեկցվի հարկային համակարգի պարզեցմամբ, ինչը հնարավորություն կտա ուժեղացնել հարկային վերահսկողությունը: Հարկային եկամուտների կառուցվածքում անհրաժեշտ է փոխել նաև պետական բյուջեի ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը: Աստիճանաբար պետք է բարձրացնել ուղղակի հարկերի տեսակարար կշիռը ի հաշիվ անուղղակի հարկերի:

БИЗНЕС-СРЕДА И СРАВНИТЕЛЬНАЯ ХАРАКТЕРИСТИКА НАЛОГОВЫХ ПЛАТЕЖЕЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АРУТЮНЯН Т.В.

Резюме

Налоговые реформы в основном должны быть нацелены на снижение налоговой нагрузки и сокращение объемов теневой экономики. В условиях слабого налогового администрирования снижение налоговой нагрузки должно сопровождаться упрощением налоговой системы, что позволит усилить налоговый контроль. В структуре налоговых доходов должно быть изменено также соотношение прямых и косвенных налогов государственного бюджета. Необходимо постепенно повысить долю прямых налогов за счет косвенных.

THE BUSINESS CLIMATE AND THE COMPARATIVE PROFILE OF TAX PAYMENTS IN THE REPUBLIC OF ARMENIA

T. HARUTYUNYAN

Abstract

The present paper justifies that owing to weak tax administration in the Republic of Armenia, the reduction of the tax burden needs to be initiated through simplifying the tax system that will let strengthen the tax supervision, which, overall, will change indirect taxes-to-budget and direct taxes-to-budget ratios. Hence, gradual increase of direct taxes-to-budget ratio will be reported due to the gradual decrease of indirect taxes.